

ԿԱՐԾԻՔ

Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի «Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ»

Աշխատանքը բաղկացած է չորս հատորից: Առաջին հատորը հիմնական տեքստն է, որը կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության և արխիվային նյութերի ցանկից (376 էջ): Երկրորդ-չորրորդ հատորները հավելվածներ են, որոնցում համապատասխանաբար ներկայացվում են տեքստային շտեմարանն ու աղյուսակները, զմանկարներն ու լուսանկարները, տեղագրական հանույթներն ու քարտեզները: Հավելվածները հաջողությամբ լրացնում են ատենախոսության շարադրանքը, նպաստում տեքստի խորն ու ամբողջական ընկալմանը: Բարձր մակարդակով են կատարված հատկապես «Վիշապ» կոթողների զմանկարները (հեղինակ՝ Ա. Հախվերդյան): Նախքան սույն ատենախոսությունը շարադրելը, հեղինակի ղեկավարությամբ կատարվել է ահռելի ծավալի խմբային աշխատանք, որը, մեր կարծիքով, խիստ արդյունավետ է եղել: Այս աշխատությունը մենք համարում ենք ոչ միայն հեղինակի նվաճումը, այլև «Վիշապ» քարակոթողներն ուսումնասիրող հնագիտական արշավախմբերի և առանձին հետազոտողների ձեռքբերումը: Մեկուկես տասնյակ տարիների ընթացքում՝ հնագիտական նպատակաուղղված ուսումնասիրություններին զուգընթաց, կատարվել են նաև երկրաֆիզիկական, երկրաքիմիական, մանրէաբանական, հնագենետիկական հետազոտություններ, հնաբուսաբանական, հնակենդանաբանական, ծաղկափոշու վերլուծություններ: Օրգանական նյութերի թվագրության համար աննախադեպ չափերով կիրառվել է ռադիոածխածնային մեթոդը, որի վերաբերյալ ձեռք է բերվել 69 տվյալ: Կազմվել է վիճակագրություն, ճշգրտվել է տեղայնացումը, քարակոթողները ցուցակագրվել ու քարտեզագրվել են: Աշխատությունը ոչ միայն միջգիտակարգային

հետազոտությունների, այլն միջազգային գիտական համագործակցությունների արդյունք է:

Հեղինակը լուրջ ուշադրություն է դարձրել հայկական, վրացական, ռուսական արխիվների ուսումնասիրությանը: Դա նոր երևույթ չէ հայ հնագիտության համար, սակայն այս աշխատությունում արխիվների ուսումնասիրության արդյունքները մատնանշում են նոր մակարդակ: Նույնը վերաբերում է նաև հասկացությունների սահմանումներին, որոնք նույնպես նախկինում կիրառություն են գտել հնագիտական աշխատություններում, սակայն այս աշխատանքում բարձրացվել են որակական նոր մակարդակի: Թեև «Վիշապ» քարակոթողների գիտական ուսումնասիրության պատմությունը շարունակվում է ավելի քան մեկ դար, քննարկվող խնդիրների ու հարցադրումների առումով այս աշխատանքը միանգամայն նոր է, արդիական և արժանի է դրվատանքի:

Ներածությունում շեշտվում է, որ «աշխատանքը նվիրված է «Վիշապ» կոչված քարակոթողների քննությանը հնագիտական տվյալների լույսի ներքո»: Դա չի նշանակում, որ հեղինակը չի պատրաստվում քննարկել առասպելաբանական, իմաստաբանական կամ նշանաբանական հարցեր, որոնց նա, մեղմ սասած, լավատեղյակ է: Հիշյալ հարցերը սեղմ ու բովանդակալից ձևով, տեղ են գտել հավելվածներում: Ընթերցողը տեղեկացվում է, որ «աշխատությունն ամփոփում է վերջին տասնամյակում իրականացված դաշտային, լաբորատոր և արխիվային աշխատանքների հիմնական արդյունքները»: Գնահատելի է կատարված աշխատանքն ուղձացված ձևով չներկայացնելու հեղինակի ձգտումը (որը գիտական յուրաքանչյուր աշխատության հաջողության նախապայմանն է), քանի որ իրականում այն տևել է ոչ թե մեկ, այլ մեկուկես տասնամյակ: Եթե հավելենք, որ աշխատության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հինգ տասնյակ ուսումնասիրություններում, դրանց արդյունքները ներկայացվել և քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի փորձաքննություն անցած աշխատանք է ներկայացված մեր քննարկմանը:

Առաջին գլխում տրվում են ինչպես «Վիշապ» քարակոթողների, այնպես էլ դրանց միջավայրում հանդիպող այլ հիմնական միավոր-հասկացությունների սահմանումները, քննարկվում են սկզբնաղբյուրները, ներկայացվում է հետազոտության մեթոդը, արծարծվում է մանրատեղանունների խնդիրը, պարզաբանվում է քարակոթողների հղման համակարգը: «Վիշապ» քարակոթողները սահմանվում են որպես «բոլոր կողմերում մշակված և կենդանակերպ պատկերագրությամբ օժտված, հիմնականում դեպի վար նեղացող մոնոլիթ կլոր քանդակներ»: Սկզբնաղբյուրների հարցը քննարկելիս առաջնությունը տրվում է հնագիտական ու բնագիտական աղբյուրներին, սակայն հասարակական գիտակարգերը նույնպես չեն անտեսվում: Այս ծավալուն ուսումնասիրությունը կատարվել է հնագիտության ժամանակակից մեթոդներով: Մտացված արդյունքների հիման վրա ստեղծվել է տվյալների շտեմարան, քննարկվել են քարակոթողների տեղակայման տարածքների ու բնատեսքի կազմակերպման առանձնահատկությունները, դրանց հնագիտական համատեքստը, գործառույթը, թվագրությունը և այլ կարևոր հարցեր: Քարակոթողներին անվանումներ տալիս, նախապատվությունը տրվել է հայեցի տեղանուններին:

Երկրորդ գլուխը նվիրված է հիմնախնդրի ուսումնասիրության պատմությանը: Ատենախոսության հեղինակն այդ պատմությունը բաժանել է հինգ հիմնական փուլերի՝ 1. 1600-1908 թթ., երբ նախնական տվյալներ են հայտնվում քարակոթողների վերաբերյալ, 2. 1909-1912 թթ., երբ սկսվում է քարակոթողների ակադեմիական հետազոտությունը, 3. 1913-1920 թթ., երբ առաջին գիտական հետազոտություններն արձագանք են ստանում, 4. 1921-1939 թթ., երբ քարակոթողների ուսումնասիրությունը հասցվում է բարձր գիտական մակարդակի, 5. 1940-2010 թթ., երբ նոր տեղեկություններ են ի հայտ գալիս քարակոթողների վերաբերյալ: Առաջին անգամ ի մի են բերվել XVII դարից մինչև մեր օրերը «Վիշապ» կոթողների վերաբերյալ հիշատակությունները, սկսած ամենաանշան թվացող հաղորդումներից՝ մինչև XXI դարի սկզբում կատարված հետազոտությունները: Դրա շնորհիվ ընթերցողը լիարժեք պատկերացում է կազմում ինդրի վերաբերյալ հարցադրումների ու դրանց ձևափոխման երկարատև ընթացքի

մասին: Ըստ իրենց ժամանակի և կատարած աշխատանքի գնահատանքի են արժանանում վիշապաքարերի բոլոր հետազոտողներն ու նրանց ուսումնասիրությունների արդյունքներն անխտիր:

Երրորդ գլխում ատենախոսության հեղինակն անդրադառնում է «վիշապ» կոթողների նորագույն հետազոտություններին: Այն է՝ իր ղեկավարությամբ 2011-2023 թթ. կատարված հնագիտական աշխատանքներին, որոնք ընթացել են երկու ուղղություններով՝ հետախուզական ուղերթեր և պեղումներ: Առկա վիշապաքարերը փաստագրելու, նոր կոթողներ հայտնաբերելու, ինչպես նաև դրանց տեղակայման օրինաչափությունները պարզելու նպատակով, հնագիտական հետազոտություններ են իրականացվել Հայաստանի Հանրապետության բոլոր տարածաշրջաններում: Բացի այդ, հնագիտական պեղումներ են կատարվել Տիրինկատար հուշարձանախմբում, որը հնագիտական արշավախումբը հայտնաբերել է 2012 թ.՝ Արագած լեռան հարավային լանջի բարձրադիր սարահարթում: Մանրամասն ներկայացվում է Տիրինկատարի բնապատմական միջավայրը, նկարագրվում են հնավայրում իրականացված պեղումները, բերվում են հետազոտությունների հիմնական արդյունքները: Պարզ է դառնում, որ Տիրինկատարը Հայաստանի միջին և ուշ բրոնզի դարերի բարձրադիր սրբավայրերից է: Սակայն, ինչպես վկայում են տարբեր հնագիտական մշակույթների պատկանող գտածոները, այնպես էլ ռադիոածխածնային վերլուծությունների տվյալները, հիշյալ տարածքը՝ որպես սրբատեղի և արոտավայր, օգտագործվել է սկսած պղնձեքարի դարաշրջանից: Ազգագրական տվյալները հաստատում են, որ «վիշապ» քարակոթողների մասին վերհուշը հասնում է մինչև մեր օրերը: Եթե նախկինում «վիշապ» քարակոթողներն ընկալվում էին որպես հնագույն ռոտոմի համակարգերի հանգուցակետերում տեղադրված և ջրի պաշտամունքին առնչվող հուշարձաններ, ապա, ըստ նորագույն հետազոտությունների՝ հիշյալ կոթողները շատ ավելի բարդ երևույթ են ներկայացնում:

Չորրորդ գլուխը հատկացվել է տարածության կազմակերպման խնդիրներին: Այն սկսվում է բնատեսքի (լանդշաֆտ) դերի գնահատումով՝ մարդկանց որոշակի խմբի

ինքնության կազմավորման հարցում: Հեղինակի կարծիքով, դրանք «հին հասարակություններում բաժանված են եղել սին և սրբազան ուղորտների»: Անդրադարձ է արվում Հայկական լեռնաշխարհի բնատեսքի կարևոր առնձնահատկություններից մեկին՝ ուղղահայաց գոտիականությանը և առանձին գոտիներին՝ լեռնագրական ու բնակության սահմանների տեսանկյուններից: Այնուհետև քննարկվում է քարակոթողների տեղադրության խնդիրը: Դասակարգվում են «վիշապ» քարակոթողների բարձրությունները, վերլուծության են ենթարկվում մեկուսի կամ խմբով հայտնվելու առանձնահատկությունները, տեսանելիության դաշտերը, դիրքը և այլ հատկանիշներ: Հեղինակը մի շարք փաստարկներ է բերում քարակոթողների սկզբնապես կանգնած լինելու տեսակետի օգտին: Անդրադառնալով տարածության մոդելավորմանը, հեղինակը կարծիք է հայտնում, որ «դաշտավայրային, նախալեռնային և բարձրլեռնային գոտիներում գտնվող մշտական և ժամանակավոր բնակավայրերը, դրանց առնչվող տնտեսական գոտիներն ու սրբավայրերն այն հիմնական միավորներն են, որոնց շուրջ ձևավորվել է համապատասխան սոցիալական միջավայրը»: Ինչ վերաբերում է «վիշապ» կոթողներին, ապա դրանք առկա են նախալեռնային և բարձրլեռնային գոտիներում և այդ երկու մակարդակներում էլ դրսևորում են միջավայրային ընդհանրություններ: Օրինակ, նախալեռնային քարակոթողների մեծ մասն ի հայտ է գալիս գոգավոր հրապարակներում, որը բնորոշ է նաև բարձրադիր քարակոթողների համար: Անկախ գոտիականությունից, քննարկվող կոթողներն ի հայտ են գալիս նույն տիպի բնական և մշակութային միջավայրերում, վիշապաքարերին բնորոշ բնատեսքերի անվանումները հաճախ կրկնվում են: Արագած լեռան և Տարոնի «Տիրինկատար» կոչվող սրբավայրերը կրկնում են իրար ոչ միայն անվան կամ բնատեսքի առումով, այլև՝ բովանդակությամբ: Խոսելով բնական ուղենիշների մասին, Ա. Բոբոխյանը գտնում է, որ «վիշապ» կոթողներին հատուկ բնատեսքերի կազմավորմանը մասնակցում են մի քանի բնական ուղենիշներ՝ լեռ, մարգագետին, աղբյուր, լիճ և այլն: Այս ուղենիշներից լեռը, մարգագետինը և աղբյուրը (փոքրաթիվ բացառություններով) ընդհանուր են բոլոր քարակոթողների համար: Առանձնացվում են նաև «վիշապ»

կոթողների սփռվածության ենթագոտիներն ու կենտրոնները: Վերլուծելով ձեռքի տակ եղած տվյալները, ատենախոսության հեղինակը գալիս է այն եզրակացության, որ հնագույն Հայաստանում գոյություն են ունեցել քարակոթողների տարածման երեք կենտրոններ՝ Այրարատ, Տարոն և Բարձր Հայք-Տայք: Ենթադրվում է, որ քարակոթողների հնագույն և առաջնային գոտին Արագածն է:

Հինգերորդ գլխում քննվում է «վիշապ» քարակոթողների հնագիտական համատեքստը, քանի որ երևույթը հասկանալու և թվագրելու համար հույժ կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե այդ քարակոթողներն ինչ հնագիտական համատեքստում են հանդիպում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանք հայտնվում են որոշակի մշակութայնացված միջավայրում, որը բաղկացած է տարատեսակ ծիսապաշտամունքային և կիրառական նշանակության հուշարձաններից: Բերվում է մշակութայնացված միջավայրի ուսումնասիրության պատմությունը: Մանրամասն նկարագրվում են հարակից կառույցները: Նորագույն հետազոտություններով պարզվում է, որ քարակոթողների անմիջական հարևանությամբ առկա են դամբանաթմբեր, կրոնիկներ, մենաքարեր, հսկայի տներ/աշտարակաձև շինություններ, բազմաբջիջ շինություններ, ջրանցքներ, ամրոցներ և բազմաթիվ այլ կառույցներ: Հետաքրքիր է հեղինակի այն դիտարկումը, որ նախալեոնային գոտիներում քարակոթողները կարող են հանդիպել դամբանադաշտերի ընդհանուր միջավայրում, իսկ բարձրլեոնային գոտիներում՝ միայն առանձին դամբարանների կամ դամբարանների փոքր խմբերի համակցությամբ: Անդրադարձ է արվում «վիշապ» կոթողների միջավայրում առկա ճնապարհներին, նշվում է հայոց աշխարհայացքում «վիշապի ճանապարհ» հասկացության գոյությունը: Քանի որ «վիշապ» քարակոթողներով բնորոշվող միջավայրերում փաստագրվել են ժայռապատկերներ, ապա քննարկվում է նաև վիշապաքարերի ու ժայռապատկերների տարածականորեն և ժամանակագրորեն առնչվածության խնդիրը: Մանրամասն քննարկվում են պեղումներով և հետախուզական աշխատանքների ընթացքում հայտնաբերված գտածոները՝ խեցեղենը, վանակատը, ուլունքները, սուզաքարը, սանդը

և օրգանական մնացորդները: Ըստ ատենախոսության հեղինակի՝ քարակոթողների մերձակայքում խեցատների կուտակումները և խեցանոթների զետեղումը՝ կրովեխներին կից ու դրանց տակ, թաղման ծեսին չեն առնչվում: Տիրինկատարի պեղումների արդյունքները վկայում են, որ վանակատը քարակոթողների շրջակայքում ամենահաճախ հանդիպող արտեֆակտն է: Ուլունքները կարևորվում են հմայական պատկերացումների ու վիշապային ավանդազրույցներում հիշատակվելու առումով: Պարզվում է, որ մարդկանց և կենդանիների ոսկորները, ինչպես նաև մարդու մագերի մնացորդները ևս որևէ թաղման հետ չեն առնչվում: Հնաբուսաբանական հետազոտությունները փաստում են, որ վիշապաքարերի շրջակայքում հայտնաբերված զգալի քանակությամբ հացահատիկը բերվել է դաշտավայրերից կամ նախալեռներից:

Եզրակացություններում ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները: Ասվում է, որ ատենախոսությամբ փորձ է արվում կարևորելու «վիշապ» քարակոթողների հնագիտական արժեքը: Թեև քննարկվող կոթողներն իրար չեն կրկնում, այնուամենայնիվ՝ ձևաբանական և պատկերազրական ընդհանուր հատկանիշների հիման վրա, հնարավոր է դառնում դրանք տիպաբանել: Քարակոթողները, ըստ պատկերի, պայմանականորեն բաժանում ենք երեք տիպի՝ ցլակերպ, ձկնակերպ և ձկնացլակերպ: Կոթողների կերտման առանձնահատկությունների վերլուծությամբ առանձնացվում են կենտրոնական, միջանկյալ ու լուսանցքային ռճերը: Հեղինակի կարծիքով՝ «վիշապ» քարակոթողի «կարևոր գործառույթը տպավորություն գործելն է»: Տարածության կազմակերպման սկզբունքների վերաբերյալ ատենախոսն այն հետևությանն է հանգում, որ դրանք համահունչ են Լեռնաշխարհի բնակչության՝ իր բնօրրանի մակերևույթի կազմությանը հարմարվելու պատմական տրամաբանությանը: Ինչ վերաբերում է քարակոթողների թվազրությանը, ատենախոսը հավանական է համարում, որ քարակոթողների ակունքները հասնում են պղնձեքարի դարաշրջան (Ք.ա. VI հազ. վերջ - V հազ. երկրորդ կես), իսկ արձանների զգեսնումն սկսվել է վաղ երկաթի դարում (Ք.ա. մոտ XII-IX դդ.): Վերջում հեղինակը եզրակացնում է, որ «վիշապ» քարակոթողները բնորոշ են միայն

Հայկական լեոնաշխարհին, ուստի դրանց ուսումնասիրությունը ձեռք է բերում առաջնային նշանակություն՝ հիշյալ տարածաշրջանի հասարակական հնագույն զարգացումները մեկնելու տեսանկյունից:

Քննարկվող բազմաթիվ կարևոր հարցերի վերաբերյալ հեղինակի հայտնած կարծիքները, դուրս գալով «վիշապ» կոթողների հիմնախնդրի շրջանակներից, ընդհանրացնող բնույթ են ստանում: Օրինակ, հնագույն շրջանում Այրարատի ու Տուրուբերանի, մասնավորապես՝ Տարոնի և Արագածոտնի, նույն մշակութային աշխարհին պատկանելու վերաբերյալ միտքը (էջ 201) կարելի հաստատել «վիշապ» կոթողներին չառնչվող համատեքստերում կատարված նորագույն ուսումնասիրություններով: Ատենախոսության մեջ արծարծվող հարցերը քննարկելիս հեղինակը եզրահանգում է անում վաղ երկաթի դարաշրջանում Հայկական լեոնաշխարհի բնակչության «կտրականապես փոխված» աշխարհայացքի մասին (էջ 164): Այս ընդգրկուն եզրակացությունը փոփոխություններ է ենթադրում նաև ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան միասնական մշակույթի մասին պատկերացումներում:

Քառահատոր այս եզակի աշխատության մեջ արծարծված հարցերը խիստ համառոտ ներկայացնելուց հետո, բարձր գնահատական տալով դոկտորական սույն ատենախոսությանը, կկամենայինք նաև ներկայացնել որոշ առաջարկներ և նկատառումներ, որոնք, մեր կարծիքով, կարող են օգտակար լինել քննարկվող հիմնարար աշխատության հրատարակության ժամանակ:

1 Աշխատությունը շարադրված է պարզ գիտական ուսումնասիրությանը հարիր ոճով և, չնայած իր մեծ ծավալին, ընթերցվում է մեկ շնչով: Մակայն, անհարկի օգտագործվող օտար բառերը, որոշ չափով կարող են ստվերել սպասվելիք տպավորությունը: Այդ բառերը, իհարկե, հազվադեպ գործածվել են նաև նախկին հետազոտողների կողմից, բայց մենք՝ ոչ անհիմն, երկյուղ ենք կրում, որ դրանք կարող են զգալիորեն ավելանալ երիտասարդ հեղինակների ապագա աշխատություններում: Առաջարկում ենք *in situ* արտահայտության փոխարեն գործածել հայերեն *անտիղ* եզրը, *լանդշաֆտ*-ի փոխարեն՝ *բնատեսք*, *հիդրոֆիլ*-ի տեղակ` *ջրասեր*, *կոնստանտ*-ի

փոխարեն՝ *հաստատուն* (մաթեմատիկական եզր է), *ռեսուշ*-ի դիմաց՝ *հարդարել* բառերը: «*Լոգիստիկ դժվարություններ*»-ի և «*հաբիտատի կազմակերպման առանձնահատկություններ*»-ի փոխարեն հայերենին առավել ընդունելի են թվում «*կազմակերպչական դժվարություններ*» և «*կենսամիջավայրի կազմակերպման առանձնահատկություններ*» արտահայտությունները:

2 Կարծում ենք, հրատարակելիք մենագրությունը կշահի, եթե որոշ հատվածներ ավելի համառոտ ներկայացվեն: Օրինակ, Բ. Պիտրովսկուն և Մ. Աբեդյանին վերաբերող որոշ մանրամասները (էջ 69-71), վարդավառ բառիմաստի մեկնությունը (էջ 73), Արագածի երկրաբանական կառուցվածքի նկարագրությունը (էջ 105-106):

3 Կան անհամապատասխանություններ, որոնց ճշգրտումը կարևոր է, քանի որ դրանք, հիմնականում, կապված են վիշապների ընդհանուր թվաքանակի հետ (էջ 188, 189, 247): Նույնը վերաբերում է խեցատների քանակին (էջ 152), որն ուղղակի թվաքանակն սխալի արդյունք է:

4 Առկա են նաև որոշ շփոթություններ. նույն շարքում թվարկվում են Լեոնարդո և Մադդա գյուղերը (էջ 118), այնինչ Մադդան Լեոնարդոյի հին անունն է: Խոշոր եղջերավոր կենդանիները համարվում են սմբակավոր (էջ 86, 87), ճիշտ կլիներ կիրառել կճղակավոր եզրը: «Տիրինկատար, կլոր կառույց 2» անվանված շինությունը (Հավելված 4, էջ 275) լուսանկարում բազմանկյուն է:

5 Առաջարկում ենք պղնձեքարեդարյան մշակույթին քարակոթողների պատկանելությունը ճշտելու նպատակով, թվագրության հնագիտական ու բնագիտական մեթոդների հետ, օգտվել նաև փորձարարական մեթոդից: Խնդիր դնել դրանով զբաղվող մասնագետների առջև՝ պղնձեքարեդարյան գործիքներով մշակելու բազալտ-անդեզիտային ապարները: Այդ մեթոդով դրական կամ բացասական արդյունքներ ստացվելուց հետո, կարելի է քննարկել նաև կուր-արաքսյան մշակույթում «վիշապ» քարակոթողների առկայության հնարավորության, Հայկական լեռնաշխարհում պղնձեքարեդարյան ու վաղբրոնզեդարյան մշակույթների փոխառնչությունների հարցերը:


6 Մեզ համար ընդունելի է ստենախոսության հեղինակի կողմից «վիշապ» քարակոթողների պայմանական բաժանումը երեք տիպի՝ ցլակերպ, ձկնակերպ և ձկնացլակերպ (էջ 17), տարօրինակ է սակայն, երբ այդ կապակցությամբ չի հիշատակվում նախկինում արված (նույնպես եռանդամ) տիպաբանությունը, որի հետ այս նոր տիպաբանությունը չի նույնանում, բայց մերձ ընդհանրություններ ունի. տե՛ս Թումանյան 2015, 116-117:

7 Տեղեկատվական առումով կարևոր է ըստ տարբեր դարաշրջանների «վիշապ» քարակոթողների թվագրության ցանկը (Հավելված 2, աղյուսակ 26, էջ 332-340), որտեղ բերվում են վիշապաքարերի թվագրության վերաբերյալ մի քանի տասնյակ հեղինակների կարծիքները, նույնիսկ այնպիսիները, որոնք առանց հիմնավորման ենթադրում են, որ «դրանք կանգնեցվել են դեռևս նախնադարում . . .»: Դրա հետ մեկտեղ, անհասկանալիորեն, անտեսվում է մի դիտարկում, որտեղ ասվում է.- «Ըստ երևույթին դրանք կիրառություն են գտնում միջին բրոնզի դարաշրջանում՝ մ.թ.ա. III հազարամյակի II կեսում, կապված Հայկական բարձրավանդակի ոռոգման հնագույն համակարգերի կատարելագործման հետ և լայն տարածում են ստանում ուշ բրոնզ-երկաթեդարյան մշակույթներում». տե՛ս Թումանյան 2015, 101:

8 Ատենախոսը բարեխղճորեն անդրադառնում է նաև այն կարծիքներին, որ որոշ ձկնակերպ կոթողներ պետք է սկզբնապես տեղադրված լինեին հորիզոնական դիրքով (էջ 194): Չի խոսվում, սակայն, որպես ջրբաժան կերտվածք վիշապաքարերը կիրառելու հնարավորության մասին, թեև ստենախոսությունում բերված գիտական ուսումնասիրություններում դրա վերաբերյալ վարկածներ եղել են. տե՛ս Թումանյան 2005ա, 39, Թումանյան 2015, 116-117: Այսպիսով, բաց է մնում այն հարցը, թե Հայաստանի լեռնային ոռոգման համակարգերում ջրբաժան ինչպիսի՞ կերտվածքներ են կիրառություն գտել, եթե ձկնակերպ վիշապաքարերն այդ նպատակով չեն օգտագործվել:

Ամփոփենք: Արսեն Բոբոխյանը վաղուց էր արժանի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին՝ իր «Հաղորդակցությունը և փոխանակությունը

Կովկասի և Տավրոսի միջակա Լեոնաշխարհում» երկհատոր աշխատության համար (լույս է տեսել գերմաներեն լեզվով, 2008 թվականին, Օքսֆորդում, կազմված է 674 էջից և պարունակում է 2866 հղում): Այսօր քննարկվող ««Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը» նոր ուսումնասիրությունն ավելի ծավալուն ու խորն է: Մա քառահատոր հետազոտություն է, որի շարադրանքն ուղեկցվում է վեց հավելվածներով: Այս ուսումնասիրությունն աչքի է ընկնում իր լայն ընդգրկումով, ժամանակակից ու նորարարական մոտեցումներով: Հիմնարար այս աշխատության մեջ այնքան տեղեկատվություն կա, որ անհրաժեշտ կլինեն տարիներ՝ դրանք ամոռջությամբ հասկանալու, իմաստավորելու և հնարավոր ընդհանրացումներն ու եզրահանգումները կատարելու համար: Մեզ մնում է միայն արձանագրել, որ քննարկվող աշխատանքը ժամանակի միջազգային պահանջներին համապատասխան, գիտական պատշաճ մակարդակով իրականացված ուսումնասիրություն է, որը բարձր արժեք ունի ոչ միայն հայ հնագիտության համար: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Մեղմագրում թվարկված հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրոյթներն ու ամփոփ շարադրանքը: Այսպիսով, քննարկվող ուսումնասիրությունն ամբողջովին համապատասխանում է դոկտորական ատենախոսության պահանջներին: Գտնում ենք, որ ««Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը» վերնագրով դոկտորական ատենախոսության հեղինակ Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ.  Գ. Թումանյան

պ.գ.դ. Գ. Թումանյանի ստորագրությունը հաստատում եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝ Ս. Դավալյան 

05. 12. 2024 թ.

